

նիկեան վարդապետ մը, Հ. Փիսքոփոն, ընկերակցութեամբ հայազգի Պետիկ վարդապետին:

Ի լուր պատուիրակին ժամանման, Կաթողիկոսն անոր ընդ առաջ կ'ելլէ Թափօրով եւ վառեալ ջահերով եւ դոհաբանական շարականներ երգելով, անոր անձին մէջ յարգելով իշխանութիւնը զայն Պատուիրակողին (12):

«Հ. Փիսքոփոյի առջեւ ծնրադրելով, կ'ըսէ Լէո, հրաժարեցաւ՝ մի առ մի նզովելով՝ Դուինի հերձուածէն եւ մոլորութիւններէն, խնդրելով հեծեծանօք եւ արտասուօք, որ ճշմարիտ հաւատոյ հօտին մէջ ընդունէ ա'յնքան տարիներէ ի վեր մոլորեալ ոշխարը, խոստանալով ապագային մէջ խոնարհ եւ հաստատուն հնազանդութիւն Հռոմէական Մայրադոյն Քահանայապետին: Այսպէս, Հ. Փիսքոփոյէն, որ այս մասին առանձին իշխանութիւն ստացած էր, բանադրանքներէ արձակում ընդունելով եւ Ուղղափառ Եկեղեցւոյ Խորհրդական Մարմնոյն մէջ մտնելով, յանպատմելի ցնծութիւն զամանս եւ ի շինութիւն շրջակայից՝ հաստատեց իր այս դաւանանքը նամակներով, զորս գրեց առ Սրբղ. Քահանայապետն Կղեմէս Ժ. եւ Կարդինալ Դալացցոյ Ալթիերի (13), նա-

(12) Archivio Vaticano, Carpegna 55 fol. 406:

(13) Կարդինալ Բալուցցի տեղի Ալպիւդանի Ալթիերի Բալուցցոյ: